

ԳԱԶԱՆԱՆՈՑԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.

ԵՐԲ ՀԱՏՎՈՒՄ ԵՆ
ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՌԵԿՐԵԱՑԻԱՆ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-37

Հիմնաբառեր. կենդանաբանական այգի, գազանանոցային զբոսաշրջություն, ակվարիում, հավաքարմագրում, էկոհամակարգ, կենսաբազմազանություն

Վայրի բնության զբոսաշրջության տարատեսակներից է գազանանոցային զբոսաշրջությունը, երբ մարդիկ ճամփորդում են այլ վայրեր՝ կենդանաբանական այգիներ գնալու, վայրի կենդանիների տեսնելու համար: Կենդանաբանական այգիներն ամենայնցեւոր զբոսաշրջային վայրերից են աշխարհում: Հողվածում քննարկվում է գազանանոցային զբոսաշրջության՝ որպես հանգստի և վայրի բնության պահպանության համատեղման միջոցի զարգացման կարևորությունը: Ներկայացվում են գազանանոցների առաջացման պատմությունը, աշխարհի ամենահայտնի 20 գազանանոցները, ինչպես նաև որոշ վիճակագրական տվյալներ աշխարհում գազանանոցների թվաքանակի, դրանց այցելուների վերաբերյալ: Անդրադարձ է կատարվում նաև Երևանի կենդանաբանական այգուն, այնտեղ պահվող կենդանաբանականներին, ինչպես նաև ՀՀ-ում կենդանաբանական այգու և գազանանոցային զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը:

Հազարավոր տարիներ շարունակ մարդիկ պահել են վայրի կենդանիներ, սակայն այդ «հավաքածուները» միշտ չէ, որ նմանվել են ժամանակակից կենդանաբանական այգիներին: Առաջին կենդանաբանական այգիները ստեղծվել են որպես մասնավոր «հավաքածուներ», որոնց միջոցով հարուստները ցույց են տվել իրենց ուժը: Եգիպտոսում և Միջագետքում հայտնաբերված փորագիր արձանագրությունները վկայում են, որ կառավարիչներն ու արիստոկրատները նմանատիպ «հավաքածուներ» ստեղծել են դեռևս մ.թ.ա. 2500 թվականին: Գոյություն ունեն ապացույցներ, որ



Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ. դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ-ում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

130-ից ավելի գիտական հրատարակումների, այդ թվում՝ ութ մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ: Հոդվածներից 15-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

<https://orcid.org/0000-0002-4131-6322>

Web of Science ResearcherID:
AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

հնագույն կենդանաբանական այգիների սեփականատերերը վարձում էին հատուկ մասնագետների՝ իրենց կենդանիների բարգավաճման և բազմացման մեջ վստահ լինելու համար:

Ժամանակակից կենդանաբանական այգիների նախատիպեր գոյություն են ունեցել ավելի ուշ քաղաքակրթություններում ևս, այդ թվում՝ Չինաստանում, Հունաստանում և Հռոմում:

Արդի հանրային կենդանաբանական այգու մոդելը հայտնի է դարձել 18-րդ դարում՝ լուսավորության ժամանակաշրջանում, երբ մարդիկ գիտական նկատառումներով սկսել էին ուսումնասիրել կենդանիներին: Գիտնականները՝ կենդանաբանական այգիների աշխատակիցների օգնությամբ, ցանկանալով հետազոտել կենդանիների վարքն ու անատոմիան, վերջիններիս պահում էին այնպիսի վայրերում, որոնք նման էին բնական միջավայրին:

Առաջին ժամանակակից կենդանաբանական այգին կառուցվել է 1793 թվականին՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում¹:

Վայրի բնության զբոսաշրջության տարատեսակներից է գազանանոցայինը, երբ մարդիկ ճամփորդում են այլ վայրեր՝ կենդանաբանական այգիներ գնալու, վայրի կենդանիների տեսնելու համար:

Կենդանաբանական այգիներն ամենաայցելվող զբոսաշրջային վայրերից են աշ-

խարհում:

Որոշ դեպքերում կենդանաբանական այգիները հանդես են գալիս որպես մշակութային և կրթական հաստատություններ, որտեղ պահվում են վայրի կենդանիներ՝ վտանգված տեսակների պահպանության, գիտահետազոտական, կրթական և մարդկանց հանգստի ու ժամանցի ապահովման նպատակով:

Մի շարք հեղինակներ կենդանաբանական այգիներն ընկալում են իբրև թեմատիկ այգիներ²:

Ըստ Կենդանաբանական այգիների և ակվարիումների ասոցիացիայի (Association of Zoos and Aquariums, AZA) տվյալների՝ ամբողջ աշխարհում կա 10000 կենդանաբանական այգի, և ամենաշատը՝ ԱՄՆ-ում՝ 350 (աղյուսակ 1):

AZA-ն շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի գործունեությունն ուղղված է կենդանաբանական այգիների և ակվարիումների զարգացմանը: Այն ներկայացնում է ավելի քան 235 հաստատություն՝ Միացյալ Նահանգներում և արտերկրում, որոնք միասին ամեն տարի ունենում են ավելի քան 200 միլիոն այցելու: AZA-ի կողմից հավատարմագրված կենդանաբանական այգիները և ակվարիումները համապատասխանում են կենդանիների խնամքի ու բարեկեցության ամենաբարձր չափանիշներին և ապահովում

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Աշխարհում ամենաշատ գազանանոցներ ունեցող երկրների տասնյակը³		
	Երկիրը	Գազանանոցների քանակը
1.	ԱՄՆ	350
2.	Գերմանիա	316
3.	Միացյալ Թագավորություն	118
4.	Ավստրալիա	104
5.	Ճապոնիա	96
6.	Բրազիլիա	80
7.	Հնդկաստան	66
8.	Կանադա	40
9.	Չինաստան	34
10.	Չեխիայի Հանրապետություն	34

¹ Zoo, <https://education.nationalgeographic.org/resource/zoo/>
² Nekoňý, L., & Fialová, D. (2018). Zoo Tourism: What Actually Is a Zoo? Czech Journal of Tourism, 7(2), 153–166. DOI: 10.1515/cjot-2018-0008.
³ Zoos by Country 2024, <https://worldpopulationreview.com/country-rankings/zoos-by-country>

զվարճալի, անվտանգ ու ուսուցողական ընտանեկան փորձ: Բացի այդ, դրանք տարեկան միլիոնավոր դոլարներ են հատկացնում գիտական հետազոտությունների և կրթական ծրագրերի աջակցմանը⁴:

2023 թվականի սեպտեմբերի դրությամբ գործում են AZA-ի կողմից հավատարմագրված 237 հաստատություն և ևս 15 հարակից հաստատություններ⁵: Հավատարմագրումը կատարվում է 5 տարին մեկ անգամ:

AZA-ի կողմից հավատարմագրված տարածքով ամենամեծ կենդանաբանական այգին աշխարհում Տորոնտոյում է՝ 710 ակր, իսկ ամենամեծ ակվարիումը՝ Ջորջիայում՝ ավելի քան 230 տեսակով և ավելի քան 10 միլիոն գալոն ջրով⁶:

AZA-ի կողմից հավատարմագրված հաստատությունների մասնագետների խնամքի տակ է գտնվում մոտավորապես 800 000 կենդանի: Վայրի բնության մեջ կենդանիների թիվը համարյա անհնար է չափել, ինչը դժվարացնում է մարդկանց խնամքի տակ գտնվող կենդանիներին վայրի բնության կենդանիների հետ համեմատելը: Բոլոր կենդանաբանական այգիներում և ակվարիումներում կան մոտավորապես 8700 տեսակի կենդանիներ: Միջին չափի կենդանաբանական այգին ունի մոտ 168, իսկ միջին չափի ակվարիումը՝ 394 տարբեր տեսակներ: AZA-ն վարում է վիճակագրական հաշվառում իր անդամ կենդանաբանական այգիներ և ակվարիումներ տարեկան այցելությունների, ինչպես նաև այցելուների տարիքի, կրթության մակարդակի, տնային տնտեսության եկամուտների և ազգության վերաբերյալ: Ըստ այդմ՝ հաշվարկվում են ավելի քան 183 միլիոն տարեկան այցելուներ ԱՄՆ-ում և ավելի քան 200 միլիոն՝ ամբողջ աշխարհում:

Այցելուներն են.

- 2,3 միլիոն տնային տնտեսություններ,
- 69%-ը՝ երեխաների հետ,
- 54%-ը՝ կանայք, 46%-ը՝ տղամարդիկ,

- 32%-ը՝ մեծահասակներ, 21-34 տարեկան,
- 57%-ը՝ երեխաներ, մինչև 11 տարեկան,
- 72%-ը՝ կենդանիների սեփականատերեր,
- 32%-ի եկամուտները գերազանցում է 100000 ԱՄՆ դոլարը,
- 68%-ը՝ զբաղված:

Երեք մեծահասակից երկուսը կենդանաբանական այգի է այցելում երեխայի հետ: Մեծահասակների 50%-ը երեխայի հետ այցելում է ակվարիում:

Այցելության միջին տևողությունը չորս ժամ է:

Կենդանաբանական այգիներն ու ակվարիումներն ավելի քան 42 միլիոն այցելու են ներգրավում սոցիալական լրատվամիջոցների միջոցով: Ֆեյսբուքում այս հաստատությունների հետևորդների թիվը գերազանցում է 16 մլն-ը, թվիթերում՝ 1,9 մլն-ը, ինստագրամում՝ 880000-ը:

Այցելուների 94%-ը կարծում է, որ կենդանաբանական այգիները և ակվարիումները երեխաներին սովորեցնում են՝ ինչպես պաշտպանել կենդանիներին: 79%-ն ավելի լավ է վերաբերվում այն ընկերություններին, որոնք աջակցում են կենդանաբանական այգիներում և ակվարիումներում վայրի բնության պահպանմանը, իսկ 66%-ն ավելի հավանական է համարում, որ ապրանքներ և ծառայություններ գնի այդ ընկերություններից⁷:

Կախված հաստատության չափից և խնամքի տակ գտնվող կենդանիների քանակից՝ AZA-ի կողմից հավատարմագրված կենդանաբանական այգիները և ակվարիումները կարող են ամեն տարի ծախսել 500000-ից մինչև 20 միլիոն (կամ ավելի) ԱՄՆ դոլար: Ընդ որում, այդ միջոցները միայն կենդանիների խնամքի համար չեն ծախսվում: 2019 թվականին ավելի քան 230 միլիոն ԱՄՆ դոլար է ծախսվել դաշտերի պահպանման ծրագրերի համար, իսկ AZA-ի Պահպանության դրամա-

⁴ About us, <https://www.aza.org/about-us>

⁵ AZA-Accredited Members, <https://www.aza.org/inst-status>

⁶ Marcy K., Interesting Zoo and Aquarium Statistics, <https://www.aza.org/connect-stories/stories/interesting-zoo-aquarium-statistics>

⁷ Visitor Demographics, <https://www.aza.org/partnerships-visitor-demographics>

շնորհների հիմնադրամը 1991 թվականից ի վեր ծախսել է 7,7 միլիոն ԱՄՆ դոլար՝ աջակցելով ավելի քան 400 բնապահպանական նախագծերի⁸:

Ոլորտի մեկ այլ միջազգային կառույց է Կենդանաբանական այգիների և ակվարիումների համաշխարհային ասոցիացիան (World Association of Zoos and Aquariums, WAZA), որի նպատակն է 1935 թվականից ի վեր առաջնորդել, խրախուսել և աջակցել աշխարհի կենդանաբանական այգիներին, ակվարիումներին և համախոհ կազմակերպություններին՝ կենդանիների խնամքի և բարեկեցության, բնապահպանական կրթության և զրբալ պահպանության ոլորտներում: WAZA-ն տարածաշրջանային ասոցիացիաների, ազգային դաշնությունների, կենդանաբանական այգիների և ակվարիումների համաշխարհային դաշինք է, որը նվիրված է ողջ աշխարհում կենդանիների և դրանց բնակավայրերի խնամքին ու պահպանմանը: Անդամակցությունը բաղկացած է մոտ 400 առաջատար հաստատություններից և կազմակերպություններից՝ ամբողջ աշխարհում, և այս թիվը շարունակում է աճել⁹:

Աշխարհի լավագույն կենդանաբանական այգիները

ԱՄՆ-ի Սան Դիեգոյի կենդանաբանական այգին հիմնադրվել է 1916 թ.: Այստեղ պահվում է 650 տեսակի ավելի քան 3500 կենդանի:

Մինգապուրի կենդանաբանական այգին ունի մի քանի հետաքրքրական տե-



սարժան վայրեր, այդ թվում՝ Օրանգուտան կղզին: Այստեղ կարելի է տեսնել աշխարհի ամենամեծ ծառաբնակ կաթնասուններին և ջունգլիներում նախաճաշը վայելել նրանց հետ:


Իսպանիայի Loro Parque-ում կարելի է դիտել ծովային առյուծների ելույթը: Այստեղ 33 ակր տարածքում կան կենդանիների և բույսերի տեսակների մեծ ու բազմազան պաշարներ:

ԱՄՆ-ի Սենթ Լուիսի կենդանաբանական այգում՝ 90 ակր տարածքի վրա կա 600 տեսակի 1700 կենդանի:

ԱՄՆ-ի Հենրի Դուրիի կենդանաբանական այգի այցելությունը հնարավորություն է տալիս տեսնելու փղերի, սպիտակ ռնգեղջյուրների, անտիլոպների, ջալյամների և իմպալաների:

Ռուբերդամի կենդանաբանական այգին Նիդերլանդներում ամենահիններից մեկն է՝ 65 ակր տարածքով, որտեղ կա ավելի քան 180 տեսակ:

Ավստրալիայի կենդանաբանական այգին, որը համարվում է «կոկորդիլոսների որսորդի տուն», զբաղեցնում է ավելի քան 1000 քառակուսի ակր տարածք և տարեկան ընդունում ավելի քան 700 հազար զբոսաշրջիկի:



Ֆինցինապրի կենդանաբանական այգին իր տեսակի մեջ հինգերորդն է ԱՄՆ-ում, որտեղ կարելի է տեսնել արևելյան բոնգոների, կոբրաների, լեմուրների և այլն:

Լիսաբոնի կենդանաբանական այգին ունի ավելի քան 2000 տեսակ՝ ներառյալ

⁸ Marcy K., Interesting Zoo and Aquarium Statistics, <https://www.aza.org/connect-stories/stories/interesting-zoo-aquarium-statistics>
⁹ About WAZA, <https://www.waza.org/about-waza/>

114 կաթնասուն, 157 թռչուն, 56 սողուն և հինգ երկկենցաղ և հողվածոտանի:

Աշխարհի ամենահին գիտական կենդանաբանական այգին՝ ZSL London Zoo-ն, Ռեջենտ այգում է՝ հենց *Լոնդոնի* սրտում: Այն պահպանում է 673 տեսակ՝ ցուցանմուշներով, ներառյալ Առյուծների երկիրը, Գորիլաների թագավորությունը և Վագրերի տարածքը:

ԱՄՆ-ի Բրոնքսի կենդանաբանական այգում կա 6000-ից ավելի կենդանի: Այգին նաև ցուցադրում է սառցե դարաշրջանի մնացորդը՝ 30 տոննա խտությամբ ճոճվող քար:

1844 թվականին բացված *Բեռլինի* կենդանաբանական այգին իր տեսակի մեջ ամենահիններից է՝ 1380 տարբեր տեսակներով և ավելի քան 20000 կենդանիներով, այդ թվում՝ բևեռային արջեր և հսկա պանդաներ:

Ֆրանսիայի ZooParc de Beauval-ում ապրում է 10000-ից ավելի կենդանի:

Ավստրալիայում՝ Շոնբրունի հայտնի պալատի տարածքում գործող համանուն կենդանաբանական այգին աշխարհում ամենահիններից մեկն է: Այստեղ կարելի է տեսնել բազմաթիվ կենդանիների, ներառյալ սուզվող ջրասամույրները, պանդաները և կռապաները:

Տորոնտոյի կենդանաբանական այգում կարելի է վայելել յոթ կենդանաբանական աշխարհագրական շրջանները՝ հնդկամալայան, աֆրիկյան, ամերիկյան, Տունդրա Տրեկի, ավստրալիական, եվրասիական և կանադական:

Ավելի քան երկու միլիոն մարդ ամեն տարի այցելում է *Հյուսթոնի* կենդանա-

բանական այգի՝ տեսնելու 900 տեսակի 6000 կենդանու: Ցուցանմուշները ներառում են աֆրիկյան անտառը և Կիրք ակվարիումը:

Պեկինի կենդանաբանական այգին, որը հայտնի է պանդաների տնով, ինչպես նաև ցամաքային կենդանիների 450 տեսակով, Չինաստանում ամենամեծն է: Այստեղ կա նաև ակվարիում՝ 500 ծովային կենդանիներով (դելֆիններ և շնածկներ):

ԱՄՆ-ում ամենատարբերվողը *Սմիթսոնյան* ազգային կենդանաբանական այգին է, որտեղ կարելի է հանդիպել աֆրիկյան առյուծների, ասիական փղերի և հսկա պանդաների:

Հարավային Աֆրիկայի կենդանաբանական այգին զբաղեցնում է 200 ակր



տարածք: Այն աշխարհի ութ ամենամեծ և նաև ամենաբարձր վարկանիշ ունեցող կենդանաբանական այգիներից մեկն է:

Սիդնեյի Տարոնգա կենդանաբանական այգին Ավստրալիայում իր տեսակի մեջ ամենամեծն է և ավելի քան 100 տարեկան: Այստեղ 69 ակր մակերեսի վրա



տարածված են ութ կենդանաբանական աշխարհագրական շրջաններ, որտեղ բնակեցված է 350 տեսակ: Սա նաև աշխարհի լավագույն կենդանաբանական այգիներից մեկն է՝ կոալաներին դիտելու համար¹⁰:

Երևանի կենդանաբանական այգին Խորհրդային Միությունում ամենաերիտասարդ կենդանաբանական այգիներից մեկն էր: Դրա ստեղծման գաղափարը վերագրվում է 20-րդ դարի 30-ական թվականներին: Իսկ արդեն 1940 թ.-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն այս առնչությամբ որոշում է ընդունում, և 1941 թվականի մայիսին մեկնարկում է կենդանաբանական այգու կապիտալ շինարարությունը: Այդ նպատակի համար հատկացվում է 30-35 հեկտար տարածք:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին շինարարության գործընթացը զգալի չափով դանդաղում է:



1954 թվականին կենդանաբանական այգին բաղկացած էր 4 բաժնից՝ սմբակավորների, գիշատիչների, թռչունների և սողունների: 1980 թվականին այստեղ առկա էր 350 կենդանատեսակ, սակայն 1990 թվականների սկզբներին դրանց թիվը նվազել է 90 %-ով¹¹:

Ներկայում կենդանաբանական այգու կան հետևյալ բաժինները՝ գիշատիչներ, թռչուններ, սմբակավորներ, պրիմատներ, ակվատերառիում: 2022 թվականի տարեվերջին Երևանի կենդանաբանական այ-



գում եղել է 142 կենդանատեսակի 768 նմուշ, որոնցից՝ 1 տեսակի 9 երկկենցաղ, 26 տեսակի 100 սողուն, 36 տեսակի 41 կաթնասուն, 22 տեսակի 265 ձուկ, 42 տեսակի 53 թռչուն և 15 տեսակի 20 անողնաշար: 18 կենդանատեսակի 129 նմուշ գրանցված է ՀՀ Կարմիր գրքում, իսկ 73 կենդանատեսակի 342 նմուշ՝ Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում¹²:

Երևանի կենդանաբանական այգին այժմ ոչ միայն տեսարժան կամ ժամանցի վայր է, այլև հանդես է գալիս կրթական նախագծերով՝ համագործակցելով ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի, Բնության պահպանության միջազգային միության (WWF), «Գերմանիայի բնության պահպանության միության» (NABU) հայաստանյան մասնաճյուղի, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի հետ:

Երևանի կենդանաբանական այգու կարևոր և առաջնային նպատակներից է ՀՀ Կարմիր գրքում և Միջազգային Կարմիր գրքում գրանցված՝ վտանգված կեն-

¹⁰ Picard G., 50 Best Zoos in the World, <https://toursanner.com/blog/best-zoos-in-the-world/>
¹¹ Երևանի կենդանաբանական այգի, Մեր մասին, <https://zoo.am/%d5%b4%d5%a5%d6%80-%d5%b4%d5%a1%d5%bd%d5%ab%d5%b6/>
¹² Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2022 թ., էջ 75, https://armstat.am/file/article/eco_book_2022_7_zoo.pdf

դանատեսակների պահպանումն ու բազմացումը, նոր կենդանատեսակներով և նոր ազատավանդակներով համալրվելը և, իհարկե, եվրոպական այգիների չափորոշիչներին համապատասխանելը: Այս առումով, կենդանաբանական այգին կարևորում է միջազգային գործընկերների հետ աշխատանքը. արդեն իսկ Եվրասիական կենդանաբանական այգիների ու ակվարիումների ասոցիացիայի (EARAZA) անդամ է, Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) անդամության թեկնածու¹³:

Այգու մուտքի արժեքը 1000 դրամ է, գործում է նաև զեղչային համակարգ և անվճար մուտքի հնարավորություն որոշ խմբերի համար¹⁴:

Երևանի կենդանաբանական այգու կենդանիներից են՝ առյուծ, եվրոպական եղնիկ, վագր, մանդրիլ, լուսան, եղեգնակատու, երկսապատավոր ուղտ, պրժնալսկուծի, ասիական փիղ, սովորական գետածի, հայկական մուֆլոն, կոկորդիլոսակերպ կայման, սիրամարգ, սպիտակագլուխ անգղ, հայկական մուֆլոն, մորուքավոր անգղ, գիշանգղ և այլն¹⁵:



Ակվատերարիումում կան 20 օձ, 3 տեսակի մողես, 3 տեսակի կրիա, 2 կոկորդիլոս և 77 տեսակի ձուկ¹⁶:

Կենդանաբանական այգու ֆինանսական մուտքերը 2022 թ. կազմել են 617 մլն դրամ, որից 443,4 մլն-ը՝ պետական և համայնքային բյուջեից, 173,2 մլն-ը՝ մուտքի վճարներից, իսկ 0,4 մլն-ը՝ այլ աղբյուրներից¹⁷: Նույն ժամանակահատվածում կենդանաբանական այգում աշխատել է 71 մարդ, այցելուների թվաքանակը եղել է 300643, որից միջոցառումների շրջանակում անվճար այցելու՝ 100540¹⁸:

2023 թ.-ին այցելուների քանակն ավելացել է շուրջ 30000-ով, կանխատեսվում է, որ այդ ցուցանիշը 2024 թ.-ին կաճի շուրջ 20 տոկոսով, քանի որ նախատեսվում է այգին համալրել նոր ազատավանդակներով, ճեմուղիներով ու կանաչապատ գոտիներով¹⁹:

Հայաստանում կենդանաբանական այգու և գազանանոցային զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Կենդանաբանական այգին օգնում է պահպանել կենդանիների բազմազանությունը, հատկապես այն տեսակների, որոնք անհետացման վտանգի տակ են: Մեծ է այգու դերը հազվագյուտ և անհետացող տեսակների բուծման ու պահպանման գործում, ինչը կարևոր է էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանման համար:
2. Կենդանաբանական այգիները կրթական, ուսուցողական եզակի հնարավորություններ են ընձեռում՝ թույլ տալով այցելուներին իմանալ տարբեր տեսակի կենդանիների, նրանց վարքագծի, բնակավայրերի և պահպանման խնդիրների մասին: Սա նպաս-

¹³ Երևանի կենդանաբանական այգի: Մեր մասին, <https://zoo.am/%d5%b4%d5%a5%d6%80-%d5%b4%d5%a1%d5%bd%d5%ab%d5%b6/>

¹⁴ Երևանի կենդանաբանական այգի, տոմսերի արժեքներ, <https://zoo.am/buy-ticket/>

¹⁵ Երևանի կենդանաբանական այգի: Կենդանիներ, <https://zoo.am/category/%d5%af%d5%a5%d5%b6%d5%a4%d5%a1%d5%b6%d5%ab%d5%b6%d5%a5%d6%80/%d5%af%d5%a1%d5%a9%d5%b6%d5%a1%d5%bd%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/>

¹⁶ Yerevan zoo, <https://armeniadiscovery.com/en/articles/yerevan-zoo>

¹⁷ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մարտին, էջ 370, https://armstat.am/file/article/sv_03_23a_5300.pdf

¹⁸ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2022 թ., էջ 74, https://armstat.am/file/article/eco_book_2022_7_zoo.pdf

¹⁹ Կենդանաբանական այգին ընդլայնվում և բարեկարգվում է, <https://news.am/arm/news/811473.html?fbclid=IwAR0-dGkqa-DgSzH5DEqKxi2obZG9mIKQoWGpFeKq4SPLMxy-u09lkdCdzVQ>

- տում է բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացմանը, բնության պահպանման կարևորության գիտակցմանը և մարդկանց ներգրավմանն այս գործում:
3. Կենդանաբանական այգիները կարող են լինել գիտական հետազոտությունների կենտրոններ՝ տվյալներ տրամադրելով կենդանիների կենսապայմանների, վարքագծի, ֆիզիոլոգիայի և գենետիկայի վերաբերյալ: Համանման ուսումնասիրությունները ոչ միայն վայրի բնության մասին գիտելիքի աղբյուր են, այլև կարող են նպաստել բնական ռեսուրսների պահպանության և կառավարման մեթոդների մշակմանը:
 4. Կենդանաբանական այգիները գրավիչ զբոսաշրջային դեստինացիա են կենդանասերների համար: Մարդիկ այստեղ վայելում են բնությունը, տեղեկանում կենդանիների մասին և ժամանակ անցկացնում նրանց հարևանությամբ: Գազանանոցային զբոսաշրջության զարգացումը եկամտի

լրացուցիչ աղբյուր է յուրաքանչյուր երկրի համար:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Հայաստանում կենդանաբանական այգու և գազանանոցային զբոսաշրջության զարգացումը մեծ օգուտ կարող է բերել ինչպես երկրի տնտեսությանը, այնպես էլ հասարակությանը՝ բնությունը սիրելու և պահպանելու առումով:

Հայաստանում գազանանոցային զբոսաշրջությունը խթանելու համար կարելի է նշել հետևյալ քայլերը՝ կենդանիների տեսականու և թվաքանակի ընդլայնում, երեխաների համար կրթական ծրագրերի մշակում, ժամանցային ծրագրերի կազմակերպում, մարքեթինգային արշավների անցկացում, սոցիալական մեդիայով և այլ կայքերով գովազդների տարածում և այլն: Միաժամանակ, պետք է նպաստել տարբեր շահառուների (կենդանաբանական այգու վարչակազմ, զբոսաշրջային կազմակերպություններ, ՀԿ-ներ, պետական կառավարման մարմիններ և այլն) համագործակցությանն այս ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Էկոզբոսաշրջություն. բնության և մարդու փոխհարաբերության տեսլականը, էջ 58-63, «Ամբերդ» տեղեկագիր, 2020/3, <https://asue.am/upload/files/amberd/2020.3.pdf>
2. Երևանի կենդանաբանական այգի: Մեր մասին, <https://zoo.am/%d5%b4%d5%a5%d6%80-%d5%b4%d5%a1%d5%bd%d5%ab%d5%b6/>
3. Երևանի կենդանաբանական այգի: Կենդանիներ, <https://zoo.am/category/%d5%af%d5%a5%d5%b6%d5%a4%d5%a1%d5%b6%d5%ab%d5%b6%d5%a5%d6%80/%d5%af%d5%a1%d5%a9%d5%b6%d5%a1%d5%bd%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/>
4. Երևանի կենդանաբանական այգի, տոմսերի արժեքներ, <https://zoo.am/buy-ticket/>
5. Կենդանաբանական այգիի ընդլայնվում և քարտկարգվում է, <https://news.am/arm/news/811473.html?fbclid=IwAR0-dGkqaDgSzH5DEqKxl2obZG9mIKQoWGp-FeKg4SPLMVxy-uO91kdCdzVQ>
6. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մարտին, https://armstat.am/file/article/sv_03_23a_5300.pdf
7. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2022 թ., https://armstat.am/file/article/eco_book_2022_7_zoo.pdf
8. About us, <https://www.aza.org/about-us>
9. About WAZA, <https://www.waza.org/about-waza/>
10. AZA-Accredited Members, <https://www.aza.org/inst-status>
11. Marcy K., Interesting Zoo and Aquarium Statistics, <https://www.aza.org/connect-stories/stories/interesting-zoo-aquarium-statistics>
12. Marcy K., Interesting Zoo and Aquarium Statistics, <https://www.aza.org/connect-stories/stories/interesting-zoo-aquarium-statistics>
13. Nekolný, L., & Fialová, D. (2018). Zoo

- Tourism: What Actually Is a Zoo? Czech Journal of Tourism, 7(2), 153–166. DOI: 10.1515/cjot-2018-0008.
14. Picard G., 50 Best Zoos in the World, <https://tourscanner.com/blog/best-zoos-in-the-world/>
 15. Visitor Demographics, <https://www.aza.org/partnerships-visitor-demographics>
 16. Yerevan zoo, <https://armeniadiscovery.com/en/articles/yerevan-zoo>
 17. Zoo, <https://education.nationalgeographic.org/resource/zoo/>
 18. Zoos by Country 2024, <https://worldpopulationreview.com/country-rankings/zoos-by-country>

Գայանե ԿՕՎՄԱՅԱՆ

*Տարիյիս ԻճԼԵԴՈՎԱԾԵՐ ԻճԼԵԴՈՎԱԾԵՐՍԿՈՎ ՍԵՆԿՐԱ «ԱՄԵՐԸ», ԱԳՁԱ,
կանդիատ ԷԿՈՆՈՄԻԿԵՍԿԻ ՄԱԿԱՆ, ԴՈՍԵՆՏ*

ՐՅՈՒՆԻ Ի ՎՈՆԿՐԱՆԵՐԱԿ

ՉՕՕՏՄԻՐԻՑՄ: ԿՕԳԴԱ ՕՅՐԱՆԱ ԴԻԿՈՅ ՔԻՐՈՎԵՐ Ի ՕՏԴԻՅ ԲԵՐԵՏԵԿԱԵՏԵՅԱ

ՕԴՆԻՄ ԻՆ ՎԻԴՈՎ ԹՄՐԻՑԻՄԱ ՔՕ ԴԻԿՈՅ ՔԻՐՈՎԵՐ ՅՎԼԵՒԱԵՏԻ ՉՕՕՏՄԻՐԻՑՄ, ԿՕԳԴԱ ԼՅՈՒԴԻ ԵԴՄԻՆ Վ ԴՐՈՒԿԻ ՄԵՏԱ, ՉՕԽԻՅ քՕՍԵՏԻՏԻ ՉՕՕՓԱՐԿԻ Ի ՄԻՐԵ. ՉՕՕՓԱՐԿԻ ՅՎԼԵՒԱԵՏԻ ՕԴՆԻՄԻՆ ԻՆ ՏԱՄԻՅ քՕՍԵՏԱԵՄԻՅ ՄՒՐԻՏԻԿԵՍԿԻ ԴՕՍՏՓԻՐԵՄԵՇԱԾԵԼՆՈՒԹԵՒՆԵՐԻ Վ ՄԻՐԵ. Վ ՏԱՄԻՅԵՐ քՐԱՏՄԻՐՎԱԵՏԻ ՅՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ քՕՕՏՄԻՐԻՑՄԻ ՄԱԿ քՐՏՄԵՇՅՈՒՆ քՕՏԻՐԱՅԻ Ի ՕՅՐԱՆԱ ՅԻՎՈՅ ՔԻՐՈՎԵՐ. Վ ՏԱՄԻՅԵՐ քՐԵՏԱՎԵՆԻՅ ԻՍՏՈՐԻԱ ՎՈՅՆԻԿՆՈՎԵՆԻԱ ՉՕՕՓԱՐԿՈՎ, 20 ՏԱՄԻՅ ԻՅՎԵՏԻՄԻ ՉՕՕՓԱՐԿՈՎ ՄԻՐԱ, Ա ԴԱՅԿԵ ՆԵԿՈՒԾՐԵ ՏԱՏԻՍՏԻԿԵՍԿԻ ԴԱՆՆԵՐ ք ՕՒՂԻՑԵՒՄԻ ՉՕՕՓԱՐԿՈՎ Ի ՄԻՐԵ Ի ՅՐ ՔՕՍԵՏԻՏԵԼԵՅ. ԴԱՅԿԵ ԽՅՐ քՐԵՏԱՎԵՆ ԵՐԵՎԱՆՍԿԻ ՉՕՕՓԱՐԿ, ՍՕԴԵՐՅԱՅԱԿԻԵՅ Ի ՆԵՄ ՅԻՎՈՒՆՆԵՐ, Ա ԴԱՅԿԵ ՆԵՕԽՈՒԾԻՄՈՒԹՅՈՒՆ քՐԱՏՄԻՐԻՑՄ ՉՕՓԱՐԿԱ Ի ՉՕՕՏՄԻՐԻՑՄ Վ ՔԱ.

ԿլյուՇեՎԵ ՄԱՅԱ: ՉՕՓԱՐԿ, ՉՕՕՏՄԻՐԻՑՄ, ԱԿՎԱՐԻՍՄ, ԱԿԿՐԵԴԻՏԱԿԻԱ, ԷԿՈՍԻՏԵՄԱ, ԲԻՕՐԱՏՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Գայանե ԿՕՎՄԱՅԱՆ

ՏԵՆԻՐ ԻճԼԵԴՈՎԱԾԵՐ ք «ԱՄԵՐԸ» ՔԵՐԵՏԻՑԻՆԿԱՆ ԿԵՆՏՐ, ԱՏՄԵ, ՔԻԴ ԻՆ ԷԿՈՆՈՄԻԿՍ, ԱՍՏՐԻՏԱՆՏ քՐՈՖԵՍՍՐ

ՄԱՐԿԵՏՍ ԻՆ ԿՈՆԿՐԱՆԵՐԱԿ

ZOO TOURISM: WHEN WILDLIFE CONSERVATION AND RECREATION INTERSECT

ՕՒՆ ԿՕՒՆ ՎԻԼԴԼԻՖ ԹՄՐԻՑԻՄԱ ԻՆ ՉՕՕՏՄԻՐԻՑՄ, ՎԵՆՑ քՕՍԵՏԻՏԻ ՉՕՕՓԱՐԿԻՆ Ի ԴՐՈՒԿԻ ՄԵՏԱ ք ՅԵՏ ՎԻՂԻՄԱՆ. ՉՕՕՓԱՐԿԻՆ ԻՆ ՏԱՄԻՅ քՕՍԵՏԱԵՄԻՅ ՄՒՐԻՏԻԿԵՍԿԻ ԴՕՍՏՓԻՐԵՄԵՇԱԾԵԼՆՈՒԹՅՈՒՆ ք ՄԻՐԵ. ԴԱՅԿԵ ՔՐԱՏՄԻՐՎԱԵՏԻ ՅՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ ք ՉՕՕՏՄԻՐԻՑՄԻ ՄԱԿ քՐՏՄԵՇՅՈՒՆ ք ՕՏԻՐԱՅԻ Ի ՕՅՐԱՆԱ ՅԻՎՈՅ ՔԻՐՈՎԵՐ. ԴԱՅԿԵ ՔՐԵՏԱՎԵՆԻՅ ԻՍՏՈՐԻԱ ՎՈՅՆԻԿՆՈՎԵՆԻԱ ՉՕՕՓԱՐԿՈՎ, 20 ՏԱՄԻՅ քՕՍԵՏԻՄ ՉՕՕՓԱՐԿՈՎ Ի ՄԻՐԵ, Ա ՅՎԿԵ ՏԱՏԻՍՏԻԿԵՍԿԻ ԴԱՆՆԵՐ ք ՕՒՂԻՑԵՒՄԻ ՉՕՕՓԱՐԿՈՎ Ի ՄԻՐԵ Ի ՅՐ ՔՕՍԵՏԻՏԵԼԵՅ. ԴԱՅԿԵ ԽՅՐ քՐԵՏԱՎԵՆ ԵՐԵՎԱՆՍԿԻ ՉՕՕՓԱՐԿ, ՍՕԴԵՐՅԱՅԱԿԻԵՅ Ի ՆԵՄ ՅԻՎՈՒՆՆԵՐ, Ա ԴԱՅԿԵ ՆԵՕԽՈՒԾԻՄՈՒԹՅՈՒՆ քՐԱՏՄԻՐԻՑՄ ՉՕՓԱՐԿԱ Ի ՉՕՕՏՄԻՐԻՑՄ Վ ՔԱ.

Keywords: zoo, zoo tourism, aquarium, accreditation, ecosystem, biodiversity